

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՈՒԿԱՆ

ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԲԱՆԸ ԿԵԱՆՔՈՒՄ:

(ՀԵՆՐԻ ԴՐՈՒՄՅՈՆԵ)

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կալիֆորնիայի գրավաճառանոցներից մէկում անցեալ աշնան հեղինակը գտաւ մի փոքրիկ գրքոյկ, որի ճակատը իւր անունն էր կրում. մի գրքոյկ, որի գոյութեան մասին նա ոչ մի գաղափար չունէր: Նա այդ գիրքը ոչ գրել էր և ոչ այն անունով գրոջմել, որը նա կրում էր: Սակայն նա չկամեցաւ իւր ուշադրութիւնը յափշտակող այդ գրքոյկի վերայ—որը՝ ազատ խօսակցութեան մի թեթեւ գրութիւն էր,—ծուռը աչքով նայել: Իւր ոյժերի չափ գրեթէ նա մի բարի ազդեցութիւն ունեցաւ: Զնայած նրա շատ թերութիւններին, այնու ամենայնիւ հեղինակը արժանի համարեց նրան ուշադիր հրատարակութեան:

Ինչպէս իւր նախընթաց օրինակը, սոյն գրքոյկն էլ խօսում է միայն մի ուղղութեան մասին, այսինքն մի մեծ առարկայի, այն է մարդկայինի մասին: Ըստ այսմ էլ լոյսն ու ստուերը բաժանուած են: Ընթերցողը թող այդ աչքի առաջ ունենայ և չզարմանայ, եթէ որոշ բաներ՝ ինչ որ աստուածաբանութիւնը միշտ և իսկապէս իրաւացի կերպով սովորեցրել է մեզ առանձին կերպով պարզաբանելու, այստեղ մութ մնան:

«Սակայն արդ, Տիրոջ փառքը մեր մէջ, իբրեւ հայկելոյ պարզ կերպարանքով արտացոլւում է: Եւ մենք պիտի կերպարանափոխուենք նոյն պատկերին, — մէկ փառքից միւսը, իբրեւ Տիրոջից, որ Հոգի է»:

Բ. Կորնթ. Գ. պ. 18.

«Ես խոստովանում եմ, եթէ մի որ և է մեծ ոյժ հոգար, որ ես միշտ միայն ճշմարիտը մտածէի և արդարը գործէի, լինէր այդ նոյն իսկ այն պայմանաւ, որ ես մեքենայ դառնայի և ամեն առաւօտ ինձ լարէին, — անմիջապէս այդ ես յանձն կառնէի»:

Մի ազատ մտածող ծանօթ բնագէտի խօսք է այս: Խնչքան ցանկանում ենք բոլորս և ինչպէս դժուար է բարոյապէս բարի լինել: Յանկուլթիւնը նոյնքան հին է, որքան մարդկային ցեղը: Այն մարդը, որի հոգւոյ խորքում վերոյիշեալ խոստովանութիւնը արձագանք չէ գրտնում — չէ ստորում, որը պատրաստ չէ ամեն ինչ զոհելու, եթէ միայն նա դրանով տեւի լաւ մարդ դառնալու յոյս կարող է ձեռք բերել:

Թող առաջիկայ նկարագրութիւնը ուղեցոյց լինի դրան: Ամենից առաջ խօսքը մի հասանելի նպատակի մասին է, և այն՝ մարդկանց առանց «մեքենայ» դարձնելու: Յարմար պայմանների մէջ բացւում, զարգանում է բնաւարտութեան գեղեցկութիւնը ճիշտ այնպէս, ինչպէս ծաղկի գեղեցկութիւնը: Այո, եթէ աշխարհիս վերայ միջոց և ճանապարհ չլինէր այդ իրագործելու, այն ժամանակ աշխարհից աստուածային ամենալաւ պարգևը կը խլուէր: Հէնց այդ է, որի համար մարդ ստեղծուել է, ինչպէս Բրոյնլինգն է ասում, «մարդ ստեղծուել է աճելու և ոչ անշարժութեան մատնուելու»: Եւ կամ՝ մի հին գրքի խորիմաստ, խօսքերի համեմատ. «որոնց նա առաջ ստեղծեց, կարգադրել է նաև, որ նրանք նմանուեն իւր Որդւոյ իսկական պատկերին»:

Քննենք մի քանի մեթոդներ, որոնք մեզ մօտ բարեւ լաւման համար գործ են դրւում: Այդ մեթոդները ինքն ըստ ինքեան սխալ մեթոդներ չեն և իրանց տեղը կարող

են շատ օգուտ բերել: Մի միայն պարտաւելու համար չեմ առաջ բերում նրանց, ես ասում եմ միայն, որ նրանք անկատար մեթոդներ են, մի կատարեալ յաջողութիւն ապահովել չեն կարող:

Առաջին անկատար մեթոդն է մի հաստատուն որոշման վերայ յոյս դնելը: Դատարկ կամքի ոյժի, նոյն իսկ լուրջ գրոհ տալու մէջ ոչ մի փրկութիւն չկայ: Կոխ, լարուածութիւն, այո՛, նոյն իսկ հոգւոյ երկիւղը ունեն իրանց նշանակութիւնը քրիստոնէական կեանքի մէջ, ինչպէս որ յետոյ մենք կը տեսնենք, սակայն այստեղ առաջ բերելը դեռ վաղ է: Երբ ես, մի քանի տարի առաջ «Էտրուրիա» նաւով ճանապարհորդում էի, Ատլանտիկ Ովկիանոսում մեր նաւը յանկարծ մի անգամից կանգ առաւ: Մի ինչ որ մեքենայ խանգարուել էր: Այդ բոլորէին աշխատելու ընդունակ հինգ հարիւր մարդ կար նաւի վերայ: Կը հաւատանք, որ մենք նաւը առաջ շարժել կարող էինք, եթէ կայմի մօտ կանգնէինք և նաւն առաջ մղէինք: Եթէ մէկն իւր սրբացումն կռուով է ձեռք բերելու ձգտում, նման է նա նրան, որը կայմը հրելով իւր նաւը ծանծաղուտից հանել է կամենում, կամ նրան՝ որը ջուրն է ընկել և իւր մողերից բռնելով, իրան ջրից հանել է կամենում: Նմանօրինակ ջանքն ու աշխատանքը իւր ամբողջ անհատատութեամբը Քրիստոս հետեւեալ խօսքերով է արտայայտել. «Իսկ այժմ, ո՞վ ձեզնից, որքան էլ որ հոգայ, կը կարողանայ իւր հասակի վերայ մի կանգուն աւելացնել: Ինքնավստահութեան մեթոդի, դո՛ւնեա, մի լաւ կողմն այն է, որ, ո՞վ այդ ճանապարհն է բռնում, նրա համար շատ շուտով էլ պարզւում է, որ այդ ճանապարհը դէպի նպատակը չէ տանում:

Այլ ճանապարհ է ընտրում նա, որ ասում է. «Իմ եղանակը այլ է. ես նկատել եմ, որ օրն ի բուն լարուած գրութիւնը միայն յիմարութիւն է: Ծշմարիտն եմ ասում: Ես ինձ չեմ թուլացնի ընդհանուրի կռուի մէջ, այլ իմ ոյժերս կը հաւաքեմ մի այլ մեղքի դէմ կռուելու համար: Այդ մեղքն աչքիս առաջից չհեռացնելով, կաշխատեմ

նրան հաստատապէս խաչել. և այսպիսով, յոյս ունեւմ կամաց կամաց բոլոր մեղքերս ոչնչացնելու Շատ լաւ մտածուած է այս, սակայն չորս պատճառով չի կարելի այդ իրագործել. նախ՝ կեանքը կարճ է, իսկ մեղքերի թիւը մի ամբողջ լեգեօն. Երկրորդ՝ իրան առանձին մեղքերի հետ կապել, նշանակում է մնացած մեղսակիր յատկութիւնները իրանց կամքին թողնել: Երրորդ՝ մի միակ մեղքի դէմ մղած կռիւն թողնում է հիւանդութեան բուն արմատն ու աղբիւրը անշարժ: Այգպիսով մեղքի մի հոսանքի միայն առաջը կառնուի, մինչդեռ փորձը մեզ ուսուցանում է բնական հանգամանքների հեղեղումն մի այլ կողմից: Բարոյականութիւնը կաթ կաթ ծծուելուն համարեա միշտ հետեւում է զղջումն. Յետ մղուած ջրերն հաւաքւում են մինչև որ ամբարտակը մի որ և է տեղ պատըռւում է, և շատ հեշտութեամբ նոյն մարդիկը աւելի չարամիտ են դառնում, քան առաջ էին: Վերջապէս սրբացումն ոչ թէ ժխտման, այս կամ այն մեղքի ճնշման մէջ է, մեղքի ծիւերը կտրելը շատ հեշտ է, սակայն չար բնոյթը կատարելապէս այգպիսի հատումներով չի բարելաւուի:

Մի երրորդն առում է. Շատ լաւ, ես իմ մեղքերս կամաց կամաց ոչնչացնելու փորձը թողնում եմ. ես կըձգտեմ այժմ՝ ընդհակառակն անել. Առաջս ունենալով մի նախատիպ պատկեր, ես կաշխատեմ՝ նրա առաքինութիւնները սեպհականացնելու. Այս նմանողութիւն է, որը իւր մէջ պարունակում է կասկածամտութիւնը, իսկ վերջինս նմանողութիւնը մեքենայական է դարձնում: Մարդս կարող է միշտ իւղատիպ պատկերը իւղանկարից, արհեստական ծաղիկը բնականից զանազանել: Առաքինի յատկութիւններ հետզհետէ իւրացնելը իսկական մտքով նոյն հետեւանքն ունի, ինչ որ մեղքը հետզհետէ արմատախիլ անելը: Իսկ սրա ժամանակաւոր արդիւնքն է անհամաչափ, հաւասարակշռութիւնից զուրկ բնաւորութիւնը: Այգպիսի բնաւորութեանը մէկը իւր երեւակայութեամբը անուանել է. «Իւր մեծութեան համար չափազանց բուծուած արարած»: Սան քրիստոնեաներ, որոնք մի կողմից չափազանց բուծուած

են, միւս կողմից չքաւոր և խղճալի են: Եթէ մէկն, օրինակ, հեղ ձեանալով, մէկ ուրիշի աշխարհային կեանքն է խլում, այդ պարզ աշխարհակութեան արդիւնքն է: Նոյնպէս մի բարեմիտ և զգաստութեան հետեւող մարդ կարող է միևնոյն պատճառով բոլորովին ողորմելի քրիստոնեայ լինել, որը միայն մի առաքինութեան է ձգտում և դրա հետ մոռանում, որ իւր միակողմանի զգաստութիւնը իրան աւելի վատ մարդ է դարձնում, քան լաւ: Սրանք ինքն ըստ ինքեան գեղեցիկ առաքինութեանց օրինակներ են, որոնք վատ յատկութեանց հետ միաւորուելով կորցնում են իրանց նշանակութիւնը, արժէքը: Բնաւորութիւնը մի համախումբ բան է, բոլոր առաքինութիւնները պէտք է միմիանց հետ առաջ գնան և մարդկային կատարեալ հասակին հասնեն: Թէև այս տեսակ սրբացումն ունի մի արդար նպատակ իւր առաջ, բայց որովհետև առանձին առանձին մերժւում է նա, այդ պատճառով էլ նպատակին չի հասնում:

Մի չորրորդ միջոց ևս կայ, որ հաղիւ յիշելու արժանի է, որովհետև նա վերև յիշած միջոցների մի այլ ձևն է,—այդ երիտասարդութեան մեթոդն է: Վերցնում են մի օրատետր, խորագրերով իւրաքանչիւր օրուայ համար, և մի ցուցակ առաքինութիւնների, որոնց դիմաց մարդ բազմանշանակ դժեր և խաչեր է քաշում: Այդ օրատետրը պահւում է մի ծածուկ տեղ, և երբեմն երբեմն, երեկոյեան խաղաղ ժամերին բարեխղճօրէն մարդ իրան դատի է ենթարկում: Օրագրով վարած կեանքը փրանկլինի մեթոդն էր, և ես հաւատում եմ, հաղարաւորները կարող են ասել, որ այդ մեթոդը, այնտեղ՝ ուր ոչ ոք չէր տեսնում, գեղեցիկ կանոնների մի ժողովածու ունէր, որ մարդիկ լուրջ ժամանակ գրի էին առել, սրանց համեմատ իրանց կեանքը վարելու համար: Ի հարկէ, բարի կամքը շատ գովելի է, միայն արդիւնքը շատ չնչին է: Ինքներդ ասացէք, արդեօք չնչին չէ: Եւ հաստատուն փաստերով կարող ենք ասել—այդպէս է հէնց նրա համար, որովհետև մի գեղեցիկ օր այդ լաւ կանոնները մենք մոռացած ենք լինում:

Վերոյիշեալ չորս մեթոդները—ինքնավստահութեան, անձնաճնշման, նմանողութեան և օրատետրի—բոլորը մարդկային, բոլորովին բնական, սակայն անհասկանալի և ինչպէս որ կան՝ անբաւարար են: Ես չեմ պնդում, կրկնում եմ՝ դարձեալ, որ դրանք անպէտք են. անստոյգութիւնը աւելի նրա մէջ է, որ նրանք ներգործող մեթոդների ուշադրութիւնը մի կողմն են թողնում և մի չափաւոր բարիարդիւնք աչքի առաջ ունենալով, զոհում են կատարեալ յաջողութիւնը: Իսկ թէ որոնք են ճիշտ մեթոդները, կը քննենք ստորև:

(շարունակելի)

Արեալ վարդապետ

